ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2023Թ. ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԹԻՎ 069-Ա
ՈՐՈՇՄԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2023թ. բյուջեն առաջին կիսամյակում ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ համամասնություններով.

1.ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Հարկային եկամուտների գծով առաջին կիսամյակում նախատեսված 251363.2 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 224000,7 հազար դրամ կամ կատարվել է 89,1% -ով՝ այդ թվում.

1. Հողի հարկի գծով մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 16808,1 հազար դրամ, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 802,5 հազար դրամ, Արաքս- 704,2 հազար դրամ, Խանջյան – 1889,8 հազար դրամ, Լենուղի- 1813,7 հազար դրամ, Լուկաշին-2579,8 հազար դրամ, Հացիկ- 1531,9 հազար դրամ, Մայիսյան- 578,1 հազար դրամ,Մյասնիկյան-2054,2 հազար դրամ, Նորավան-58.6 հազար դրամ, Սարդարապատ – 278,2 հազար դրամ:
2. Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար մուտքեր չեն նախատեսվել, փաստացի հավաքագրվել է 7724,3 հազ. դրամ:
3. Գույքահարկ փոխադրամիջոցների համար պլանով նախատեսված 168970,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 164869,7 հազար դրամ կամ կատարվել է 97,6 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան-2928.6 հազար դրամ, Արաքս-3032,9 հազար դրամ, Խանջյան- 6248.2 հազար դրամ,Լենուղի-3332,9 հազար դրամ, Լուկաշին- 7871.9 հազար դրամ, Հացիկ- 7760,6 հազար դրամ, Մայիսյան-2911,5 հազար դրամ, Մյասնիկյան- 8732.2 հազար դրամ, Նորավան – 3319,2 հազար դրամ , Սարդարապատ- 13423,9 հազար դրամ:
4. Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկը պլանով նախատեսված 82392,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 34598,7 հազար դրամ կամ կատարվել է 42 %-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան – 640,8 հազար դրամ,Արաքս- 1654,8

հազար դրամ, Խանջյան- 1140,7 հազար դրամ,Լենուղի- 2018,0 հազար դրամ, Լուկաշին- 2160,3 հազար դրամ, Հացիկ- 2256,4 հազար դրամ, Մայիսյան-3447,5 հազար դրամ, Մյասնիկյան- 932,4 հազար դրամ, Նորավան – 280,9 հազար դրամ ,Սարդարապատ- 5402,4 հազար դրամ:

2. ՏՈՒՐՔԵՐ

Տուրքերի գծով առաջին կիսամյակում նախատեսված 41277,8 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 56987 հազար դրամ կամ կատարվել 138,1 %-ով:

1. Պետական տուրքերի գծով նախատեսված 17640,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 21144,7 հազար դրամ կամ կատարվել 119.9 %-ով:
2. Տեղական տուրքերի գծով նախատեսված 23637,8 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմել է 35842,3 հազար դրամ կամ կատարվել է 151,6 %-ով:

Նույն թվում՝

ա) համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 1636,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1841,0 հազ. դրամ կամ կատարվել է 112,5 %-ով:

բ) համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու աշխատանքներ կատարելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 780,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 420,0 հազ. դրամ կամ կատարվել է 53,8 %-ով:

գ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար նախատեսված 48.0 հազ. դրամի դիմաց փաստցի մուտքերը կազմել են 60.0 հազ. դրամ կամ կատարվել է 125 %-ով:

դ) համայնքի տարածքում ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանքի ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 8140,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 10744,6 հազ. դրամ կամ կատարվել է 132%-ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 140,0 հազար դրամ, Արաքս- 754,0 հազար դրամ, Խանջյան- 190.0 հազար դրամ, Լենուղի- 149,8 հազար դրամ, Լուկաշին- 190,5 հազար դրամ, Հացիկ-257,3 հազար դրամ, Մայիսյան- 123,0 դրամ, Մյասնիկյան- 571.0 հազար դրամ, Նորավան – 69,0 հազար դրամ , Սարդարապատ- 790,4 հազար դրամ:

ե) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 1280,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2743,9 հազար դրամ կամ կատարվել է 214,4 % - ով:

զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար գազի և վառելիքաքսայուղային

նյութերի վաճառքի գծով 2488,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 4780,0 հազար դրամ կամ կատարվել է 192,1 %-ով:

է) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00- ից հետո աշխատելու թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 1000,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1454,2 հազար դրամ կամ կատարվել է 145,4 %-ով:

ը) համայնքի տարածքում ընթացիկ տարվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության մուտքերի գծով նախատեսված 5600,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 8256,5 հազար դրամ կամ կատարվել է 147,4 %-ով:

թ) համայնքի տարածքում ընթացիկ տարում մարդատար տաքսի ծառայություն իրականացնելու թույտվության համար մուտք չի նախատեսվել, փաստացի մուտքագրվել է 50,0 հազար դրամ:

ժ) համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի տարեկան թույլտվության համար նախատեսված 1150,0 հազար դրամի դիմաց արդեն իսկ 1-ին կիսամյակում փաստացի մուտքագրվել է 1220,0 հազար դրամ կամ կատարվել է 106,1 %-ով:

ի) համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի տարեկան թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 900,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 785,0 հազ. դրամ կամ կատարվել է 87,2 %-ով:

լ) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար մուտքերի գծով նախատեսված 1200,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 1522,1 հազար դրամ կամ կատարվել է 126,8 %-ով:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 615258,7 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 615258,7 հազար դրամ կամ կատարվել է 100 %-ով:

ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների գծով նախատեսված 613944,3 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 613944,3 հազ. դրամ կամ կատարվել է 100 %-ով:

բ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսված 1314,3 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորվել է 1314,3 հազ. դրամ կամ կատարվել է 100 %-ով:

գ) Պետական բյուջեից տրամադրվող կապիտալ պաշտոնական դրամաշնորհների գծով նախատեսված 8093,5 հազար դրամի դիմաց մուտքագրվել է 10699,2 հազար դրամ:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Այլ եկամուտներից մուտքերի գծով նախատեսված 138728,3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել 141942,9 հազար դրամ կամ կատարվել է 102,3 %-ով:

Նույն թվում՝

1. Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության գծով նախատեսված 24245,2 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 18642,6 հազ. դրամ կամ կատարվել է 79,9 % - ով, որից ըստ գյուղերի՝ Այգեվան- 394,0 հազար դրամ,Արաքս- 409,5 հազար դրամ, Խանջյան- 660,6 հազար դրամ, Լենուղի-965,8 հազար դրամ, Լուկաշին- 105,4 հազար դրամ, Հացիկ-325,0 հազար դրամ, Մայիսյան- 40,0 դրամ, Մյասնիկյան- 515,1հազար դրամ, Նորավան – 0 դրամ , Սարդարապատ- 155,4 հազար դրամ:
2. Գույքի վարձակալության գծով նախատեսված 1769,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 2087,9 հազար դրամ կամ կատարվել է 118 % - ով:
3. ՏԻՄ-ներին պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար ստացվող միջոցների գծով պլանով նախատեսված 2592 հազար դրամի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է 2398,8 հազար դրամ:
4. Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) վճարների գծով նախատեսված 2867,4 հազ. դրամի փաստացի մուտքը կազմել է 2149,2 հազար դրամ կամ կատարվել է նախատեսվածի նկատմամբ 75 %-ով:
5. Տեղական վճարների գծով նախատեսված 94054,1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 94882,7 հազար դրամ կամ կատարվել է 100,9 % - ով,

   որից Աղբահանության վճարների գծով նախատեսված 33651,6 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 35441,0 հազար դրամ կամ կատարվել է 105,3 % - ով:

6. Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարների գծով նախատեսված 11200 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 19665,2 հազար դրամ կամ կատարվել է 175,6 % - ով:

7. Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներից նախատեսված 600,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքագրվել է 100 հազար դրամ կամ կատարվել է 16,7 % - ով:

8. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրվող այլ ոչ հարկային եկամուտների գծով նախատեսված 1400,0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքը 1-ին կիսամյակին կազմել է 390,0 հազ. դրամ :

Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի եկամուտների առաջին կիսամյակում ընդամենը նախատեսված 1054721,4 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 1048888,4 հազար դրամ կամ կատարվել է 99,4 %-ով, սեփական եկամուտների գծով նախատեսված 428777,3 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 420431,7 հազար դրամ կամ կատարվել է 98,1 %-ով:

ԾԱԽՍԵՐ/Վարչական բյուջե/

Արմավիր համայնքի 2023թ. բյուջեն առաջին կիսամյակում ըստ ծրագրերի ծախսերը կատարվել են՝

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. « Օրենսդիր և գործադիր մարմիններ» 01 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 197527,9 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 153924,1 հազ. դրամ կամ կատարվել է 77,9 %-ով:

2. «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» 01 բաժին 6-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 25600,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 23833,5 հազ. դրամ կամ կատարվել է 93,1 %-ով:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ոռոգում՝ 04 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 36000,0 հազ. դրամի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 31031,1 հազ. դրամ կամ կատարվել է 86,2 %-ով:

2. Ճանապարհային տրանսպորտ 04 բաժին 5 խումբ 1 դաս՝ նախատեսված 5000.0 հազար դրամի դիմաց դրամարկղային ծախս 2023 թվականի առաջին կիսամյակում չի կատարվել:

3. Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) Ոչ ֆին. ակտիվների օտարումից մուտքեր 04 բաժին 9 խումբ 1 դաս՝ նախատեսված -4000.0 հազար դրամի դիմաց մուտքագրվել է -96379,1 հազար դրամ :

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Աղբահանում 05 բաժին 1-ին խումբ 1-ին դաս՝ նախատեսված 110000,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել 104281,0 հազար դրամ կամ կատարվել է 94,8 %-ով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. Ջրամատակարարում 06 բաժին 3 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 29000,0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 28132,1 հազար դրամ կամ կատարվել է 97,0 %-ով:

2. Փողոցների լուսավորում 06 բաժին 4 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 26000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 25193,6 հազար դրամ կամ կատարվել է 96,9 %-ով:

3. Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) 06 բաժին 6 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 3500,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3262,6 հազար դրամ կամ կատարվել է 93,2 %-ով:

ՀԱՆԳԻՍՏ. ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

1. Գրադարաններ 08 բաժին 2 խումբ 1 դաս՝ նախատեսված 18000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 17025,3 հազար դրամ կամ կատարվել է 89,6 %-ով:

2. Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ 08 բաժին 2 խումբ 3 դաս՝ նախատեսված 17450,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 16875,6 հազ. դրամ կամ կատարվել է 86,7 %-ով:

3. Այլ մշակութային կազմակերպություններ 08 բաժին 2 խումբ 4 դաս՝ նախատեսված 12974,7 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 12751,1 հազար դրամ կամ կատարվել է 98,2 %-ով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1.Նախադպրոցական կրթություն ծախսերի գծով 09 բաժին 1 խումբ 1 դաս՝ նախատեսված 250000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 240572,1 հազար դրամ կամ կատարվել է 96,3 %-ով:

2.Արտադպրոցական դաստիարակություն 09 բաժին 5 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 92000,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 91754,4 հազար դրամ կամ կատարվել է 99,7 %-ով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող), 10 բաժին 7 խումբ 1-ին դաս՝ նախատեսված 11500,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 10925,0 հազար դրամ կամ կատարվել է 95 %-ով:

ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ

1.ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ 11 բաժին 1-ին խումբ 2 դաս՝ նախատեսված գումարը կազմում է 384728,3 հազար դրամ:

ԾԱԽՍԵՐ/ֆոնդային բյուջե/

1. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, հոդված 5113՝ տարեկան նախատեսված 764050,8 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը 1-ին կիսամյակին կազմել է 396398,1 հազար դրամ կամ կատարվել է 51,9 %-ով:
2. Վարչական սարքավորումներ, հոդված 5122՝ նախատեսված 1906,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1071,0 հազար դրամ կամ կատարվել է 56,2 %-ով:
4. Այլ մեքենաներ և սարքավորումներ,հոդված 5129՝ նախատեսված 1000.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս չի կատարվել:
5. Նախագծահետազոտական ծախսեր, հոդված 5134 նախատեսված 20500,0 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 3500,0 հազար դրամ կամ կատարվել է 25,9 %-ով:

2023 թվականի առաջին կիսամյակում ավարտվել են 2022թվականի 3-րդ եռամսյակին մեկնարկած սուբվենցիոն ծրագրերից Արմավիր քաղաքի թիվ 3 և թիվ 7 մանկապարտեզների շենքերի ջեռուցման համակարգի կառուցման, գազաֆիկացման, հին դռները և պատուհանները նորով փոխարինման, Լենուղի գյուղի ջրամատակարարման ցանցի, Արմավիր քաղաքի Մ.Գորկու անվան փողոցի հիմնանորոգման աշխատանքները,Մյասնիկյան գյուղի մանկապարտեզի ջեռուցման համակարգի կառուցման և սանհանգույցի վերանորոգման աշխատանքները:

Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի առաջին կիսամյակում ընդամենը նախատեսված 1646754,1 հազար դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 1162630,7 հազար դրամ կամ կատարվել է 70,6 %-ով:

ԲՅՈՒՋԵԻ ՍԻՋՈՑՆԵՐԻ ԴԻՖԻՑԻՏԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Արմավիր համայնքի բյուջեի 2023 թվականի տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 588032.7 հազար դրամ, իսկ առաջին կիսամյակում փաստացի հավելուրդը կազմել է 570747,5 հազար դրամ: